

տիկինը կ'ելլէր անկողինէն՝ առաջին գործն էր կերակուրին քեցնիւն դնել օճախին վրայ, որպէսզի պատրաստ ըլլար կերակուրը՝ այր մարդոց գործի երթալէն առաջ, և այսպէս ընտանիքին բոլոր անդամները կը հաւաքուէին սուրճային գլուխը և փառաւոր ճաշ մը կ'ընէին։

Իրիկունը՝ ժամը եւրոպական 6-7ին, գործէն դարձին, կ'ընթերէին, դարձեալ ճոխ ու զօրաւոր կերակուրներով։

Իվերէկի և կարծեմ ուրիշ գիւղերու մէջ քիչ մը տարբեր էին ճաշաժամերը։

Իվերէկցի կիները, ինչպէս շատ մը գիւղերու մէջ, դաշտային աշխատութեանց իրենք լծուած ըլլալով, առաւօտուն կանուխէն առանց նախանշալ ընելու, իրենց զամբիւղները շալկած էծուկ (=արտ) կ'երթային աշխատելու, և ժամը եւրոպական 10ի ատենները կը դառնային տուն, ուր կը փութային նաև շուկայէն իրենց էրիկ մարդիկը, և հոն հաւաքաբար կը ճաշէին, տաք կերակուրներով։ Ցորեկը անոնք ալ կ'եսարացուց նման կ'անցընէին թեթև ուտելիքներով, առհասարակ չորեղէն, իրիկունը բոլորուելու համար կրկին սեղանին շուրջը՝ ուտելու ամէնէն գլխաւոր ճաշը օրուան, և արբենալու իրենց տուներու մէջ պատրաստուած գինին և օղին, որոնց գործածութիւնը դժբախտաբար շատ տարածուած էր ժողովուրդին մէջ, բայց միայն այրերու՝ վասնզի կանայք միայն տարին մէկ օր Բարեկենդանին էր որ կը խմէին, ըսելով թէ այն օրը արուղաքօ (հաւանօրէն արեղաթողին աղաւաղումը) է, և ուրիշ ատեն բացարձակապէս իրենց ըմպելիները չէին մօտեցնել ըմպելիներու բաժակներուն։

Իմանութիւնը քաջալերուած էր անոր համար որ իրենց տուներուն մէջ առաւ էր գինին և օղին, որոնք կը պատրաստէին իրենց այգիներուն խաղողով, իրենց կիները առհասարակ իրենց ձեռքերով։ Ուրիշ տեսակ ըմպելիներ սովորաբար անձանօթ էին և երբեք չէին գործածուիր։

Օղիի և գինիի չափ ժողովուրդին մէջ տարածուած էին նաև ծխախոտը, քիթախոտը, ինչպէս նաև որոշ չափով կլկալը (նարիլիէն),



Իվերէկցի Հայ կիներ խաղող կ'ուսեցն ցաւի ասեցն

Իվերէկցի Հայ մամիկը ցաւէն յետոյ կ'աղօթէ իր հարսներուն հետ